ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԱԴ/25-5

<<ԱՊԱՀՈՎ ԴՊՐՈՑ >> ԾՐԱԳՐԻ <<ԿՐԹԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ>> ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ք.Արտաշատ 30 մայիսի 2025թ.

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմը ,ի դեմս աշխատակազմի գլխավոր քարտուղար Ա.Մկրտչյանի /այսուհետ պետական մարմին/,որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա ,մի կողմից ,և <<ՀՀ Արարատի մարզի Զորակի Մոնթե Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետև կազմակերպություն/,ի դեմս տնօրեն Արմինե Ավետիսյանի ,որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա,մյուս կողմից/այսուհետև ՝ միասին կողմեր/, հիմք ընդունելով ՀՀ պետական բյուջեի<<1183.Ապահով դպրոց>> ծրագրի<<32001. Կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավում>> միջոցառման իրականացման նպատակով ՀՀ կառավարության 2025թ. Մայիսի 08-ի N 546-Ն որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը /այսուհետև պայմանագիր/ հետևյալի մասին.

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ՀՀ Արարատի մարզի Զորակի Մոնթե Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոցի լաբորատորիաների,դասասենյակների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռք բերման համար կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը,իսկ կազմակերպությունը պարտավորվում է միջոցառումն իրականացնել սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Ծրագրով նախատեսված կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները /այսուհետև՝ միջոցառումներ/ ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված 1-ում:

2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ /այդ թվում՝ պետական այլ մարմինների միջոցով/ ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությունը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2 կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3 սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայացողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 7.2-րդ և 7.3-րդ կետերով նախատեսված տուգանքները,իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում ՝7.4 կետով նախատեսված տույժերը,

2.1.4 առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու ՝ միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները,եթե՝

ա. Առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջոցառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում,որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների ժամկետները/ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում/,

գ. Իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.5 կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկված գումարը,

2.1.6 սույն պայմանագիրը օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.1.7 Պայմանագրի 2.4.4-րդ ենթակետով սահմանված ժամկետում կազմակերպությունից պահանջել ներկայացնել սույն ենթակետով նախատեսված հաշվետվությունը:

2.2 Կազմակերպությունը իրավունք ունի՝

2.2.1.իրականացված միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու իրեն հասանելիք գումարը.

2.2.2 Պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից /անգործությունից/անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները ,

2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու և Պետական մարմնի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4 վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

2.2.5 անհրաժեշտության դեպքում իրականացնել թերությունների ակտը կազմած հանձնաժողովի կողմից հաստատված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքների ծավալների ավելացում և /կամ/այլ բնույթի աշխատանքներով փոխարինում սույն պայմանագրի գնի շրջանակներում՝ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 56-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերին համապատասխան:

2.3 Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և /կամ/ ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը,այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2 ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3.կատարել ծրագրի /առանձին միջոցառումների/ իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.4 իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացում:Հաշվետվություններում թերություններ հայտնաբերելու դեպքում դրանք վերադարձվում են կազմապերպությանը լրամշակման՝ սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին ,ապա դրանք ընդունվում են:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 իրականացնել ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2 պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3 կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4 սույն կետի 2.4.6 ենթակետով սահմանված դեպքում գնման պայմանագիրը կնքելուց հետո 10-օրյա ժամկետում Պետական մարմին ներկայացնել գնման պայմանագրի պատճենը,իսկ միջոցառումների ավարտից հետո սույն Պայմանագրի 5.1 կետով սահմանված ժամկետում և սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 2-ով սահմանված ձևանմուշներով Պետական մարմին ներկայացնել ֆինանսական և բովանդակային հաշվետվություն՝ իր կողմից իրականացված ծախսերի և կատարված միջոցառման մասին/նախահաշվի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կազմակերպության մոտ, վերջինս պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար/.

2.4.5 սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառման իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6 ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները,աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել <<Գնումների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան.

2.4.7. չծախսված գումարի վերջնական,տարեվերջյան մնացորդը/տնտեսումները,խնայողությունը/ վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ,քան մինչև սույն Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների /ֆինանսական և բովանդակային/ ներկայացմանը հաջորդող 15-րդ աշխատանքային օրը:

3. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

3.1 Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական,ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ :

3.2 Մոնիթորինգ իրականացվում է պետական մարմնի և /կամ/ նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ,և կատարվում են առաջարկություններ:

3.4 Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5 Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրի 1.1–ին կետում նշված միջոցառումների իրականացման համար Պետական մարմինը հատկացնում է 9273800/Ինը միլիոն երկու հարյուր յոթանասուներեք հազար ութ հարյուր /ՀՀ դրամ՝ ՀՀ Կառավարության 2025 թվականի պետական բյուջեի <<1183. Ապահով դպրոց>>ծրագրի<<32001.Կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավում>> միջոցառման բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<4655. Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին>>հոդվածով:

5.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

5.1 Սույն պայմանագրով նախատեսված միջոցառման կատարման ժամկետը մինչև 2025թ. հոկտեմբերի 30-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև Պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը:

5.2 սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

6.ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1 Սույն պայմանգրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմակերպության կողմից ներկայացվում են Պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ ,քան սույն պայմանագրով սահմանված ժամկետում:

6.2 Պետական մարմնի կողմից կազմակերպության կողմից կատարած միջոցառումների ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման – ընդունման ակտ՝ սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 3-ով սահմանված ձևանմուշով:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

7.2 Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումների չիրականացման կամ ոչ պատշաճ իրականացման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է Պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 0.5/զրո ամբողջ հինգ տասներորդական/ տոկոսի չափով: Տուգանքը հաշվարկվում է նաև միջոցառումը պայմանագրով սահմանված ժամկետներում իրականացնելու ,սակայն Պետական մարմնի կողմից չընդունվելու դեպքում:

7.3 Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումների իրականացման համար պայմանագրի 5.1 –ն կետով սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տուգանք՝ ժամկետների խախտմամբ իրականացված միջոցառման համար նախատեսված

գումարի 0.5/զրո ամբողջ հինգ տասնորդական / տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

7.4 Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը Պետական մարմնին վճարում է տույժ՝պայմանգրով նախատեսված միջոցառման/միջոցառումների/ գնի 0.05/զրո ամբողջ հինգ հարյուրերորդական/ տոկոսի չափով՝ ուշացած յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում,տույժը հաշվարկվում է միայն այն միջոցառման /միջոցառումների/ գնի նկատմամբ,որի /որոնց/ կատարման վերաբերյալ 5-րդ կետով սահմանված ժամկետում պետք է ներկայացվեր հաշվետվությունը:

7.5 Սույն պայմանագրի 7.2,7.3 և 7.4 կետերով սահմանված տուգանքների և տույժերի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

7.6 Պետական մարմինը սույն պայմանագրի 7.2,7.3 և 7.4 կետերով սահմանված տուգանքների և տույժերի գումարները հաշվարկվում է և հետ է գանձում կազմակերպությանը վճարված գումարից կամ հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7.7.Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ/ ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից ,եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով,որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո,և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկարշարժը ,ջրհեղեղը,հրդեհը,պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը,քաղաքական հուզումները,գործադուլները հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը և այլն,որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի ,ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն,եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով,որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված,ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ,ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետական մարմին	**Կազմակերպություն**
ՀՀ Արարատ մարզպետի աշխատակազմ	**ՀՀ Արարատի մարզի Զորակի Մոնթե Մելքոնյանի**
Ք.Արտաշատ Օգոստոսի 23/60	անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ
ՀՀ ՖՆ գործառնական վարչ	Արարատի մարզ Գ Զորակ
Հ/Հ 900411003883	ՀՀ ՖՆ գործառնական վարչ
ՀՎՀՀ 04245019	Հ/Հ 900438000169
	ՀՎՀՀ03804261
Գլխավոր Քարտուղար՝ Ա.Մկրտչյան	Տնօրեն՝ Ա. Ավետիսյան

Հավելված 1

ԱՇ/25-5

2025 թ Մայիսի կնքված N -------- պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

N N	Իրականացվելիք միջոցառումներ				
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	վերջնաժամկետը	Պահանջվող գումարը/ ՀՀ Դրամ/
1	Աջակցություն դպրոցներին <<Ապահով դպրոց>> ծրագրի շրջանակներում	<<ՀՀ Արարատի մարզի Զորակի Մոնթե մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի լաբորատորիաների,դասասենյակների ընթացիկ նորոգում	Աշխատանքների ձեռք բերումը կազմակերպվում է << Գնումների մասին >> օրենքով սահմանված կարգով	30.10.2025թ	9273800
		Ընդամենը			

Պետական մարմին

ՀՀ Արարատ մարզպետի աշխատակազմ

Ք.Արտաշատ Օգոստոսի 23/60

ՀՀ ՖՆ գործառնական վարչ

Հ/Հ 900411003883

ՀՎՀՀ 04245019

Գլխավոր Քարտուղար՝ Ա.Մկրտչյան

Կազմակերպություն

ՀՀ Արարատի մարզի Զորակի Մոնթե Մելքոնյանի

անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

Արարատի մարզ Գ Զորակ

ՀՀ ՖՆ գործառնական վարչ

Հ/Հ 900438000169

ՀՎՀՀ03804261

Տնօրեն՝ Ա. Ավետիսյան